**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2021 թվականի
փետրվարի 4-ին

# «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՒ ««ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված* 1**. «Եկամտային հարկի մասին» 2013 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-86-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 5-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ.

«6) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամտի չափով, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:»:

***Հոդված* 2**. ««Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2018 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՕ-85-Ն օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հունվարի 1-ից» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասի» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Օրենքի 9.1-ին հոդվածի 1.1-ին մասի 3-րդ կետն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:»:

***Հոդված* 3**.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք Հայաստանի Հանրապետությունում գործող

ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) են ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՆԱԽԱԳԱՀ՝** **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021 թ. փետրվարի 15
Ստեփանակերտ
ՀՕ-7-Ն